

– Բայց ես հայրենեաց վրայ լուր մը չունիմ, առաջին անգամ է, որ հինգ տարի ժամանակէ վերջ, ինձի ծանօթ եւ սիրելի անուններ տուող հայ իշխան մը կը տեսնեմ,– պատասխանեց Սուրեն,– պատմե՛ ուրեմն Յայաստանի վրայ, ի՞նչ վիճակի մէջ է:

– Երթանք տուն, իշխան, հոն կը պատմեմ քեզ եւ կ'իմացնեմ վիճակը, ուր կը գտնուին բուն Յայաստան եւ մեր Փոքր Ասիոյ գաւառը:

Յոն Վասակ, Կոստանդին կայսեր աթոռ նստելէն ի վեր ամէն անգթութիւնքը, յիմարութիւնքը սկսաւ պատմել Սուրենի, որ արդէն մեզ ծանօթ են, բայց երբ հասաւ իւր հօրեղբօր՝ Գեւորգ Մագիստրոսի մահուան վրայ՝ աչքները կատաղի փայլ մը առին եւ իմացուց նաեւ թէ ինք արդէն տաճկաց ամիրապետին հետ բանակցութեան մտած էր յունաց լուծը թօթափելու համար: Սկսաւ համրել այդ յիմար աստուածաբանական կատաղութեանց արդիւնքը, որ ամէն օր կրօնքի նորանոր փոփոխութիւն հետրելով՝ նոր հաւատոյ հանգանակ ստեղծելով, դժգոհ վիճակի կը բերեր թէ Կոստանդնուպոլսոյ ժողովուրդը, թէ Իտալիոյ կողմերը, թէ հայերը եւ թէ մարտայիթները: Եւ թէ ինչպէ՛ս հայք կայսեր առաջարկութիւնքը համարձակ մերժելուն համար, նա էլ Կոստանդնուպոլիս սկսեր էր պատերազմի պատրաստութեան, եւ որ ինք Վասակ իմացուցեր էր Թեոդորոս Ռշտունունոյ, եւ թէ իւր որդին ղրկած էր առ նա դաշնադրութիւն մը կապելու համար միաբան գործելու, բայց հիմա կը տեղեկանար թէ կայսրը իմանալով իւրտմունքը՝ պատրաստի գտնուած զօրքով ուղղուէր էր Տրապզոն, եւ իրեն նաեւ հրաման ղրկէր էր նոյնպէս զօրքով Բարձր Յայք դիմել:

– Ուրեմն,– ըսաւ Սուրեն,– ի՞նչ կեցեր ենք, պետք է ժամ առաջ երթանք քանի որ կայսրը Կարին չէ հասեր:

– Այո՛,– պատասխանեց Վասակ,– բայց Մամիկոնեան Սուշեղ միաբանութիւն կազմեր է ընդդէմ Թեոդորոսի, կաթողիկոսը եւ նախարարաց մեծ մասն էլ իրեն հետ համաձայն են, ինչպէս ինձ կ'իմացնէ Մանանաղեաց գաւառէն եկած նամակ մը. արդէն Եկեղեաց եւ Դարանաղեաց եւ Ապերոյ իշխանք սկսեր են ժողովուրդ իրենց զօրքերով:

– Է՛հ յիմարներ,– ըսաւ Սուրեն,– միշտ միեւնոյն մարզիկն են, միշտ նախանձ, ատելութիւն: Դժբախտութիւն հոն է, որ ոչ մեկը չի գտնուեցաւ, որ ամենմուն գլուխը միանգամայն կոտրէ:

– Ի՞նչ կ'ըսես, եղբայր, երբ նոքա էլ վերնան ի՞նչ կը մնա: